



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆԴԱԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**ԱՆԴԱԿԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Քաղ. Երեւան**

**16 հունվարի 2013թ.**

**Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը՝**

**Նախագահությամբ՝ Ռ. Նազարյանի  
Անդամակցությամբ՝ Վ. Դովիաննիայանի  
Ա. Խաչափրյանի**

**Ուսումնասիրելով «Քալրֆուլ Մոբայլ» ՍՊԸ-ի դիմումով գործը  
քննության ընդունելու մասին հարցը.**

**Պ Ա Ր Զ Ե Յ.**

**Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Քալրֆուլ Մոբայլ» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.**

**1. Որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 71-րդ հոդվածի 1-ին մասի առաջին ենթակետի՝ ՀՀ Սահմանադրության 1, 3, 6 և 31-րդ հոդվածներին համապարասխանության հարցը.**

**2. Որոշել «Իրավական ակդերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 1, 3 և 6-րդ հոդվածներին համապարասխանության հարցը:**

**Դիմողը նշում է, որ ՀՀ Սահմանադրությունը կարենորել է մրավոր սեփականության առանձնահարկությունը և սահմանել, որ դրա պաշտպանությունն իրականացվում է առանձին օրենքների միջոցով: Սահմանադրության՝ մրավոր սեփականության վերաբերյալ համապարասխան դրույթի դրամաբանությունից ելնելով էլ սպեղծվել է «Վարանքային նշանների**

մասին» ՀՀ օրենքը, որի համապատասխան դրույթների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ապրանքային նշանների գործերով վիճարկման հայցերի համար նախադեսվում է 5 դարվա ժամկետ: Դիմողը գրնում է, որ ՀՀ վարչական դադարության օրենսգրքի 2 Եւ 71-րդ հոդվածներն այնքանով, որքանով բացառում են հագուկ եւ ընդհանուր նորմերի մրցակցության ժամանակ հագուկ նորմերի (խոսքը վերաբերում է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով նախադեսված դադարական հագուկ նորմերի մասին) առավելությունը, հակասում են ՀՀ Սահմանադրության 1, 3, 6 Եւ 31-րդ հոդվածներին:

«Իրավական ակդերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ դիմողը նշում է, որ «օրենսգիրք» իրավական ակդի եռթյունը բացահայփվել է միայն «Իրավական ակդերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով, հետեւաբար, օրենսգրքի գերակայության հարցն այս առումով հակասության մեջ է մտնում ՀՀ Սահմանադրության հետ: Ըստ դիմողի՝ օրենքի առկայության պայմաններում օրենսգրքին առավելություն փալու պարտականությունը չունի որևէ սահմանադրական հիմք եւ չի բավարարում իրավական օրենքի պահանջներին:

Դադարական կազմը, հիմնվելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրության վրա եւ դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջներով, գրնում է, որ գործի քննությունը սահմանադրական դադարանի կողմից ենթակա է մերժման հետեւյալ պարզաբանությամբ.

1. ՀՀ վարչական դադարության օրենսգրքի 2-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ մասերի, 71-րդ հոդվածի առաջին մասի առաջին ենթակետի վերաբերյալ.

ա/ դադարական կազմի կողմից դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը վիճարկվող դրույթների հակասահմանադրականությունը փորձում է հիմնավորել՝ ենթադրյալ օրենսդրական բացը մարնանշելով:

Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ օրենսդրական բացը՝ որպես իրավունքի բացի դադարական կարգավորման ոլորտում գրնվող փաստական հանգամանքների նկարմամբ կոնկրետ նորմադիվ պարվիրանի բացակայությունն է: ՀՀ սահմանադրական դադարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ, անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դադարանի եւ օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գրնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմադիվ պարվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դադարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականու-

թյանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է փվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը **Խախորում է կամ կարող է խախորել կոնկրետ սահմանադրական իրավունք**: Զարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դադարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դադարանի քննության առարկա միայն այն դեպքում, եթե օրենսդրության մեջ **առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ** կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, եթե առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Փաստորեն, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա է սահմանադրական դադարանի քննությանը, եթե կոնկրետ գործով միաժամանակ առկա են օրենսդրական բացի՝ սահմանադրական դադարանի կողմից մարդանշված վերոնշյալ չափանիշները, այն է՝ կոնկրետ սահմանադրական իրավունքի խախորում կամ այդ խախորման պուրենցիալ հնարավորություն եւ օրենսդրության մեջ այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքների բացակայություն կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված հակասական իրավակիրառական պրակտիկա:

Դիմողի կողմից առաջ քաշված հիմնախնդրի վերաբերյալ օրենսդրության մեջ առկա են հսկակ իրավակարգավորումներ, միեւնույն ժամանակ ձեւավորված չէ հակասական իրավակիրառական պրակտիկա, չափորոշիչներ, որոնց առկայությունը պարբաղիր պայման է, որպեսզի իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա լինի սահմանադրական դադարանի քննությանը: Մասնավորապես, «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» Փարիզյան կոնվենցիայի 6 BIS հոդվածի համաձայն՝ ապրանքային նշանների գործերով վիճարկման հայցերի համար նախագրեսվում է 5 դրավա ժամկետ, իսկ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ապրանքային նշանների գործերով վիճարկման հայցերի համար եւս նախագրեսվում է 5 դրավա ժամկետ: Այսինքն, սույն գործի շրջանակներում առկա է օրենսդրական հսկակ իրավակարգավորում, չկա ձեւավորված հակասական պրակտիկա: Այլ կերպ, խնդրո առարկա գործի շրջանակներում առկա չեն ՀՀ սահմանադրական դադարանի կողմից մշակված այն չափորոշիչները, որոնք հնարավորություն կրային սպեղծված իրավիճակը դիմումունքում «օրենսդրական բաց» եզրույթի ներքո: Ներեւաբար, դադարական կազմն արձանագրում է, որ վիճարկվող դրույթներն

իրենց բովանդակությամբ սահմանադրափրավական վեճ չեն առաջացնում եւ, եթե առկա է օրենսդրական բաց, ապա այն լրացնելու մենաշնորհը, ելնելով սահմանադրական դադարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումներից, պարկանում է օրենսդիր մարմնին, այսինքն՝ վիճարկվող դրույթները չեն կարող սահմանադրական դադարանում գործի քննության առարկա հանդիսանալ ենթադրյալ օրենսդրական բացի վիճարկման լույսի ներքո.

բ/ դիմումի ընդհանուր գրամաբանությունը վկայում է, որ կոնկրետ գովազարկ դեպքում դիմուի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դադարական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմուն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ: Փաստորեն դիմուը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ Էռլայան բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց:

Ղեկավարվելով ՀՀ սահմանադրական դադարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱԸ-21 որոշման մեջ արդահայփած իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմուը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ Էռլայան բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դադարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, դադարական կազմը գրնում է, որ այս համափեքսդրում առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախագրեսված հիմք:

2. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ.

ա/ դադարական կազմի կարծիքով, դիմուը, վիճարկելով վերոնշյալ դրույթի սահմանադրականությունը, չի ներկայացրել պարզած իրավական հիմնավորումներ դրա հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչդեռ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհադրական դիմումի ընդունելիության հավելյալ պարփառի պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համափեքսդրում ՀՀ սահմանադրական դադարանն իր ՍԴԱ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել առ այն, որ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմուին ներկայացվող պահանջը, համաձայն

որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հագլանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որեւէ հիմնավորում:

Բացի դրանից, դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախովել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախովման փասքի եւ վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջեւ պարզառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ սահմանադրական դադարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արգահայքած իրավական դիրքորոշման, անհագության դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է.

թ/ դիմումի եւ կից փասքաթղթերի ուսումնավիրությունը վկայում է, որ կոնկրետ փվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկարմամբ կայացված համապարասխան դադարական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ: Փաստորեն դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Դեկավարվելով ՀՀ սահմանադրական դադարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԸՆ-21 որոշման մեջ արգահայքած իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դադարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, դադարական կազմը գրնում է, որ այս համագեքսպում առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախագետակած հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դադարանի թիվ 1 դադարական կազմը

ΟΡΩΣΙΩΣ.

«Քայլֆուլ Մորայլ» ՍՊԸ-ի դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

## Նախագահող՝

Անդամներ՝



16 հունվարի 2013թվականի

ՄԴԴԿՈ/1-3